պահպանվում են ինստիտուտի բանահյուսական արխիվում:

9. Բանահավաքչական աշխատանքներին զուգընթաց մեծ գործ է կատարված բանահյուսական մի շարք ժանրերի գիտական համահավաք հրատարակության /,,Սասնա ծռեր,, , ,, Հայ ժողովրդական հեքիաթներ,, , ,, Հայկական առածանի,, , ,,Ավանդապատում,, , ,,Հայ ժողովրդական հանելուկներ,, և այլն/, արդի բանահյուսության նմուշների/,,Լենին փաշա,, և այլն/, ինչպես նաև ժողովրդական երգարվեստի ու պարարվեստի / Ս.Ս.Լիսիցյանի ,, Հայ ժողովրդի հնավուրց պարերն ու թատերական ներկայացումները,, եռահատոր ուսումնասիրությունը և այլն/ նյութերի գրառման և հետազոտության ասպարեզում:

10. Վերջին տասնամյակում հայ բանագիտությունը ձեռնարկել է բանահյուսական արխիվի մշակումը և համակարգումը՝ նորագույն գիտական մեթոդներով, օգտագործելով էլեկտրոնային հաշվիչ տեխնիկան, պատրաստվում է բանահյուսական գլխավոր կատալոգը, ժողովրդական խաղիկների համահավաքը և առակների քանակական-համեմատական հետազոտությունը:

Դերեն Վարդումյան

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿԻ ԲՆԱԿԱՁՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՄԱ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1. Ամեն մի էթնոսի նյութական մշակույթը փոխառնչակցված բաղադրիչների համալիր է, պայմանավորված հասարակական կյանքի բոլոր կողմերով: Այդ պարագան նպատակամղում է նյութական մշակույթը դիտելու ինչպես կառուցվածքորեն առնչակցված բաղադրիչների ամբողջական համակարգ, նույնպես և էթնիկ մշակույթի համանման այլ համակարգերի / որպիսիք են տնտեսությունը, հասարակական կյանքը և հոգևոր մշակույթը/ հետ փոխգործողության մեջ գտնվող համակարգ: Նյութական մշակույթին նման մոտեցումը պատմա-համեմատական վերլուծության առավել արդյունավետ միջոց է:

2. Այդ վերլուծությունը ենթադրում է, մի կողմից՝ էթնոսի գործառնության բնա-էկոլոգիկ պայմանների հաշվառում, մյուս կողմից՝ դրա բնակության էթնո-մշակութային միջավայրի հանուր ամբողջության հաշվառում, ներառած թե միջէթնիկ առնչությունների բնույթը,

թե ներէթնիկ կապերի ինտենսիվությունը: Պատմա-համեմատական վերլուծությունը նպաստում է ոչ միայն առանձին բաղադրիչների /ինչպես, օրինակ՝ բնակարանը, հագուստը, ուտելիքը և այլն/, այլև տարբեր պատմական դարաշրջանների նյութական մշակույթի ամբողջության ընդհանրացված տիպերի կազմում: Հենց նման ընդհանրացված տիպերն էլ այս կամ այն էթնոսի նյութական մշակույթի ըմբռնման և այլէթնիկ համալիրների հետ լայնորեն համադրելու առավել արդյունավետ գործիք են:

3. Հայկական բարձրավանդակի բնակչության նյութական մշակույթի հետազոտումը վերը նշված տեսանկյուններով, նախ և առաջ, հնարավոր է դարձնում ուսումնասիրվող ռեգիոնի բնակչության նյութական մշակույթի ընդհանրացված տիպերի կազմումն ըստ զանազան պատմական ժամանակաշրջանների: Այնուհետև, դրանց բաղդատությունը նյութական մշակույթի այլ համալիրների հետ հնարավորություն է ընձեռում բացահայտելու ինչպես հաճախ մշակութային ավանդույթի ուժ ստացած էթնիկորեն յուրահատուկ գծերը, այնպես էլ առաջավորասիական և կովկասյան համալիրների հետ համադրվող ընդհանրությունները, որոնք հայկական բարձրավանդակի բնակչության նյութական մշակույթը վերջինների հետ մի կարգի մեջ են առնում:

Ջավեն Խառատյան

## ԴԻՊԱԾԱՑԻՆ /ՕԵԱՋԻՈՆԱԼ/ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ՀԱՅԵՐԻ ԿԵՆՑԱՂՈՒՄ

1. Հայ ժողովրդական հավատալիքների և դրանց հետ առնչվող / շատ հաճախ էլ՝ դրանցից բխող / բազմաբովանդակ ծեսերի համակողմանի գիտական ուսումնասիրությունը ենթադրում է տիպաբանական և կառուցվածքային վերլուծություն: Նման հարցադրման դեպքում որոշակիորեն առանձնանում են հավատալիքների, սովորույթների ու ծեսերի հաստատուն, պարբերաբար կրկնվող համալիրներ և փոփոխական, որոշակի պարբերացման չենթարկվող ծիսախմբեր:

2. Հաստատուն ծիսական համալիրներ են կազմում ինչպես ժողովրդական-տոնացուցային, այնպես էլ ընտանեկան / ծննդյան, հարսանյաց և թաղման/ ծեսերը: Առաջինն ամեն տարի /պարբերաբար/ կրկնվող հասարակական ծիսաշար է, երկրորդը՝ կանխատեսվող պարտադիր ծիսաշար յուրաքանչյուր ընտանիքի կամ առանձին անհատի կյանքում: Տոնա-